ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
14 ապրիլի 1999 թ.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 4.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) **կրթություն՝** անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար.

1.1) **ուսուցում՝** կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը.

1.2) **հարատև կրթություն՝** անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներ, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը.

1.3) **ֆորմալ կրթություն՝** հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից և հանգեցնում տվյալ մակարդակի որակավորման աստիճանի շնորհման և դիպլոմավորման.

1.4) **ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում)՝** կրթության լրացուցիչ ուսուցման, ներառյալ արտադպրոցական ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի.

1.5) **ինֆորմալ կրթություն՝** անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

1.6) **լրացուցիչ կրթություն (ուսուցում)՝** լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ոչ ֆորմալ ուսումնառություն, որի առավելագույն տևողությունը կարող է լինել մինչև հինգ ամիս.

1.7) **ունկնդիր՝** լրացուցիչ կրթական ծրագրում ընդգրկված և ուսումնառող անձ.

1.8) **սոցիալական գործընկերություն՝** բարձրագույն և մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպությունների, գործատուների, դրանց միավորումների և ոչ առևտրային այլ կազմակերպությունների, արհեստակցական միությունների, հանրային իշխանության մարմինների միջև, աշխատաշուկայի և տնտեսության զարգացման կարիքներին համապատասխան, կրթության ապահովմանը համընդհանուր համաձայնեցված նպատակների

իրականացմանը միտված կրթական, աշխատանքային, գործընկերային ու սոցիալական համագործակցության դրսևորման ձև.

1.9) **սովորող՝** սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված և կրթական հիմնական ծրագրով (ծրագրերով) ուսումնառող անձ.

1.10) **կրթության որակ՝** կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է՝

հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների.

1.11) **Ուսուցման ազգային ռեեստր՝** լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների, ուսուցում իրականացնողների, դասընթացներին մասնակցած, գնահատված և վկայագրված անձանց, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում և ճանաչում անցած անձանց, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերի, դասընթացների ընթացքի նկատմամբ մշտադիտարկում իրականացնող, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները գնահատող անձանց տվյալների ազգային շտեմարան՝ անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության պահանջներին համապատասխան.

1.12) **համեմատելի չափանիշներ՝** որոշակի մասնագիտության չափորոշչի կամ ծրագրի ուսումնառության արդյունքներով, զբաղմունքի նկարագրով կամ պաշտոնի անձնագրով սահմանված որոշակի կարողությանը ներկայացվող պահանջներ.

1.13) **ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում և ճանաչում՝** անձի կարողությունների և սահմանված որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության փաստը պաշտոնապես հավաստելու գործընթաց.

1.14) **անձի փաստացի կարողություններ՝** անձի որոշակի գիտելիքներ, կարողություններ, ընկալումներ ու հմտություններ՝ անկախ դրանք ձեռք բերելու եղանակից.

1.15) **գնահատում՝** անձի փաստացի կարողությունները հավաստող վկայությունները սահմանված չափանիշներին համապատասխանության համադրության գործընթաց.

1.16) **ուսումնառություն՝** ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ միջավայրում տեղի ունեցող գործընթաց, որի միջոցով անձը յուրացնում է տեղեկություններ, գաղափարներ և արժեքներ՝ ձեռք բերելով գիտելիք, կարողություն, հմտություններ կամ փորձառություն.

1.17) **պատվիրատու՝** պետական մարմին կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը հայտագրել է որոշակի գիտելիք, կարողություն, հմտություն ձեռք բերելու, կատարելագործելու, լրացնելու, արդիականացնելու ցանկությունը կամ անհատական ու որոշակի խմբի կարիքը.

1.18) **մուտքային պահանջ՝** լրացուցիչ կրթական ծրագրի մասնակցի համար պատվիրատուի սահմանած կրթության որոշակի աստիճանի, զբաղմունքի, կարողության, իմացության, ստաժի և այլ առանձնահատուկ նախապայմանների առկայություն.

1.19) **ուսումնառության վերջնարդյունք՝** դասընթացի կամ կրթական ծրագրի ավարտին պահանջվող գիտելիքի, կարողունակությունների ամբողջություն.

2) **պետական կրթական չափորոշիչ՝** նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները.

3) **կրթական ծրագիր՝** ուսումնառության բոլոր բաղադրիչների ամբողջություն, որով սահմանվում են համապատասխան կրթության մակարդակը, ուղղվածությունը, բովանդակությունը և ուսումնառության վերջնարդյունքները.

3[1]) **հատուկ կրթություն՝** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգ, որը մեկ կամ մի քանի կրթական ծրագրերի հիման վրա կարող է իրականացվել հատուկ կամ ընդհանուր հանրակրթական ուսումնական հաստատություններում.

3.2) **արտադպրոցական ծրագիր՝** երեխաների հետաքրքրությունները, նախասիրությունները, կարողունակությունները, ինտելեկտուալ զարգացման մակարդակը, ստեղծարար

հմտությունները, ֆիզիկական ունակությունները, մարդկային կապիտալը զարգացնող ու կատարելագործող, ֆորմալ (հիմնական) կրթական ծրագիրը լրացնող ուսուցման ծրագիր.

4) **ուսումնական հաստատություն՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան.

4.1) **ռազմաուսումնական հաստատություն՝** հանրակրթական կամ միջին մասնագիտական կամ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն, որն ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը ռազմական կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան.

5) **մանկապարտեզ՝** նախադպրոցական կրթության ծրագիր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատություն.

6) **հանրակրթական ուսումնական հաստատություն՝** մեկ կամ մի քանի հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն.

7) *(կետն ուժը կորցրել է 10.07.09 ՀՕ-161-Ն)*

8) **կրթահամալիր՝** տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորում.

8.1) *(կետն ուժը կորցրել է 22.05.24 ՀՕ-251-Ն)*

9) **քոլեջ՝** արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություն.

10) **համալսարան՝** բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, հասարակագիտական, գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը.

11) **ինստիտուտ՝** բարձրագույն ուսումնական հաստատություն, որն իրականացնում է գիտության, տնտեսության և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական ու հետբուհական կրթական ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ.

12) **ակադեմիա (ուսումնական)՝** բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է որոշակի ոլորտում կրթության, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացմանը, իրականացնում է որոշակի ճյուղի (բնագավառի) բարձր որակավորման մասնագետների պատրաստումը և վերարտակավորումը, հետբուհական կրթական ծրագրերը.

13) **կոնսերվատորիա՝** բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է երաժշտության ոլորտում մասնագետների պատրաստմանը, որակավորման բարձրացմանը և հետբուհական կրթական ծրագրերի իրականացմանը.

14) **մասնաճյուղ՝** ուսումնական հաստատության տարածքային առանձնացված ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ տարբեր կրթական ծրագրեր.

15) **ուսումնական կենտրոն՝** կազմակերպություն (այդ թվում՝ ուսումնական հաստատություն), որն իրականացնում է լրացուցիչ կրթական ծրագիր (ծրագրեր).

15.1) **արտադպրոցական կազմակերպություն, կենտրոն՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է արտադպրոցական ծրագիր.

16) **լիցենզավորում՝** ուսումնական հաստատության գործունեության թույլտվության գործընթաց.

17) *(կետն ուժը կորցրել է 22.05.24 ՀՕ-251-Ն)*

17.1) **որակավորում՝** պետական ամփոփիչ ստուգման արդյունքում մասնագիտական որակավորման բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով.

17.2) **որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ)՝** կրթության համակարգի բոլոր մակարդակներում շնորհվող որակավորումների բնութագրերի ամբողջություն, որն ընդգրկում է կրթության յուրաքանչյուր մակարդակում ուսումնառության արդյունքների կամ մասնագիտական

գործունեության համար անհրաժեշտ գիտելիքի, կարողունակությունների և հմտությունների ընդհանրական բնութագրիչները.

17.3) **ոլորտային որակավորումների շրջանակ (ՈՈՇ)՝** որակավորումների ազգային շրջանակին համապատասխան՝ որոշակի ոլորտում կրթական մակարդակի որակավորումների խումբ (ցանկ, ամբողջություն) և դրա հետ կապված ուսումնառության ընդհանուր վերջնարդյունքներն ապահովելու պահանջներ (բնութագիր).

18) **ուսումնական հաստատության հավատարմագրում՝** որակի արտաքին գնահատման գործընթաց, որով հավաստվում է ուսումնական հաստատության կամ դրա կրթական ծրագրի (կրթական ծրագրերի խմբի) համապատասխանությունը հավատարմագրման սահմանված չափանիշներին.

18.1) **արհեստավոր կամ կրտսեր մասնագետ՝** անձին շնորհվող որակավորման աստիճան, որով հավաստվում է արհեստագործական մակարդակի (մասնագիտական կրթության առաջին մակարդակի) կրթական ծրագրի ուսումնառության ավարտը.

19) **մասնագետ՝** անձին շնորհվող կրթության որակավորման աստիճան, որով հավաստվում է միջին մասնագիտական մակարդակի (մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի) կրթական ծրագրի ուսումնառության ավարտը.

20) **բակալավր՝** բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կրթություն ունեցող և առնվազն քառամյա (ոստիկանական, փրկարարական կամ զինվորական մասնագիտությունների համար՝ միջին մասնագիտական ոստիկանական, փրկարարական կամ զինվորական կրթության հիմքով, առնվազն եռամյա) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան պետական ամփոփիչ ստուգում անցած անձանց.

21) **դիպլոմավորված մասնագետ՝** բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կամ մասնագիտական կրթություն ունեցող անձանց՝ առնվազն հնգամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի պետական ամփոփիչ ստուգման արդյունքով.

22) **մագիստրոս՝** բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ առնվազն մեկ տարի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի պետական ամփոփիչ ստուգման արդյունքով.

23) **հետազոտող՝** հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ ասպիրանտուրայում եռամյա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի պետական ամփոփիչ ստուգման արդյունքով.

24) **ինտերն՝** բարձրագույն բժշկական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բժշկական բարձրագույն կրթական ծրագրերն ավարտած և առնվազն մեկ տարվա հետբուհական ուսուցում ստացած անձանց.

25) **կլինիկական օրդինատոր՝** բարձրագույն մասնագիտական որակավորման աստիճան, որը շնորհվում է բարձրագույն բժշկական կրթություն ունեցող անձանց՝ մեկից մինչև հինգ տարվա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի պետական ամփոփիչ ստուգման արդյունքով.

26) **էքստեռն (այսուհետ՝ դրսեկություն)՝** ինքնակրթությամբ և ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ամփոփիչ պետական ամփոփիչ ստուգման եղանակով իրականացվող կրթության ձև.

27) **նպատակային ուսուցում՝** մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանները, այդ թվում՝ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցում:

28) ղեկավարման իրավունքի հավաստագիր՝ նախադպրոցական, հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների հավակնորդների համար կրթության պետական կառավարման

լրազորված մարմնի կազմակերպած թեստավորման դրական արդյունքի ապահովման դեպքում տրվող փաստաթուղթ:»:

Հոդված 36. Կրթության բնագավառում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) ապահովում է պետական կրթական քաղաքականության իրականացումը.

2) հաստատում է պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը.

2.1) հաստատում է որակավորումների ազգային շրջանակի և դրա մակարդակների (որակավորումների) ընդհանրական բնութագրերը.

3) հաստատում է ուսուցանվող մասնագիտությունների ցանկը.

4) հաստատում է հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն կրթության պետական պատվերը.

5) հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները.

5.1) հաստատում է պետական արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների օրինակելի կանոնադրությունները.

6) հաստատում է պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը.

6.1) սահմանում է լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ներառյալ պետական նմուշի վկայականի և դրա ներդիրի ձևը.

6.2) սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգը, ներառյալ պետական նմուշի հավաստագրի և դրա ներդիրի ձևը.

6.3) սահմանում է պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը.

6.4) ~~սահմանում է արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագրերը.~~ սահմանում է արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագիրը.

6.5) ~~սահմանում է պետական և համայնքային արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը, արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների, կենտրոնների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը. սահմանում է արտադպրոցական կազմակերպությունների, այդ թվում՝ մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, մարզադպրոցների և մարզական կազմակերպությունների, արշավներ, զբոսաշրջություն կազմակերպող, բնապահպանական ինչպես նաև արտադպրոցական ծրագիր իրականացնող այլ կազմակերպությունների և կենտրոնների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը.~~»: սահմանում է պետական բյուջեից ֆինանսավորվող արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ֆինանսավորման կարգը.»:

7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

(36-րդ հոդվածը խմբ. 26.07.01 ՀՕ-209, լրաց. 01.12.03 ՀՕ-58-Ն, 04.02.10 ՀՕ-20-Ն, 21.06.14 ՀՕ-83-Ն, լրաց., փոփ. 04.05.22 ՀՕ-127-Ն, լրաց. 10.02.23 ՀՕ-26-Ն, խմբ. 22.05.24 ՀՕ-251-Ն)

(04.05.22 ՀՕ-127-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)
(10.02.23 ՀՕ-26-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)
(22.05.24 ՀՕ-251-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Հոդված 37. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝

1) մշակում է կրթության զարգացման պետական ծրագիրը, պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը.

2) ***(կետն ուժը կորցրել է 20.01.21 ՀՕ-31-Ն)***

2.1) սահմանում է կրթության որակի գնահատման չափանիշները՝ ըստ ուղղությունների: Դրանք կարող են հիմք դառնալ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները սահմանելու համար.

3) ապահովում է օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումը և հրատարակումը.

3.1) մշակում և հաստատում է արտադպրոցական ծրագրի ձևաչափը և վերջնարդյունքները՝ ըստ սահմանված ուղղությունների.

3.2) հաստատում է արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ներկայացրած արտադպրոցական ծրագրերի երաշխավորման կարգը.

~~3.3) հաստատում է արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը.~~

3.4) հաստատում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների օրինակելի ուսումնական պլանները.

3.5) հաստատում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների ընդունելության կազմակերպման և ավարտական քննությունների անցկացման ընթացակարգը.

3.6) երաշխավորում է նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվող ծրագրերը, ուսումնական նյութերն ու դասընթացները, այդ թվում՝ փորձարարական.

4) իրականացնում է ուսումնական հաստատությունների լիցենզավորումը.

5) մշակում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները.

6) սահմանում է մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչական պաշտոններին ներկայացվող հիմնական չափանիշները, ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի կարգը, մրցույթ չհայտարարելու դեպքերը.

6.1) կազմում և հաստատում է ոլորտային որակավորումների շրջանակը, որակավորումների ցանկերը և որակավորումների բնութագրերը.

6.2) հաստատում է յուրաքանչյուր մակարդակի կրթական ծրագրի և որակավորման նկարագրերը.

7) ձևավորում է ուսումնական մասնագիտությունների ցանկերը.

8) մշակում է հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների պետական պատվերը.

9) հաստատում է պետական և հավատարմագրված ոչ պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերով և որակավորումներով ընդունելության կարգը.

9.1) հավաստում է անձի կարողությունների և սահմանված որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության փաստը՝ սույն օրենքով սահմանված ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացների միջոցով.

9.2) սահմանում է սույն օրենքի 36-րդ հոդվածի 6.1-ին և 6.2-րդ կետերով սահմանված կարգերի գործարկումը համակարգող, կազմակերպող ու օժանդակող կազմակերպության ընտրության կարգը և ըստ սահմանված պահանջների՝ ընտրում համապատասխան կազմակերպությունը, որը հանդես է գալիս սոցիալական գործընկերների անունից (պետության, գործատուների և արհմիությունների).

9.3) սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկը և դրանց ներդրման ժամանակացույցը՝ ըստ որակավորման աստիճանների.

9.4) ստեղծում է Ուսուցման ազգային ռեեստրը՝ ընտրված համակարգող կազմակերպության հետ պայմանագրային պատվիրակման հիման վրա.

9.5) հաստատում է Ուսուցման ազգային ռեեստրի վարման կարգը, այդ թվում՝ սույն օրենքի 3.4-րդ մասի 6-րդ կետով սահմանված գործընթացում արձանագրված խախտումների տեսակները, դրանք վերացնելու ժամկետները, ինչպես նաև Ուսուցման ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների (հաշվառման համարանիշի) օգտագործումը ապաակտիվացնելու և վերաակտիվացնելու կարգը.

9.6) սահմանում է լրացուցիչ կրթության վկայականի, վկայականի ներդիրի և հավաստագրի, հավաստագրի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգը.

9.7) երաշխավորում է լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերը.

9.8) հաստատում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում և ճանաչում անցկացնող գնահատողների ցանկը.

9.9) հաստատում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում և ճանաչում անցած անձանց ցանկը և վավերացնում տրամադրվող հավաստագիրն ու ներդիրը.

9.10) սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացի կազմակերպման, իրականացման, ճանաչման և հավաստագրման ընթացակարգային և մեթոդաբանական փաստաթղթերը, գնահատողներին և գնահատում իրականացնելու կենտրոններին ներկայացվող պահանջները, կողմերի իրավահարաբերություններն ապահովող պայմանագրի հիմնական պայմանները, գործընթացի կողմերի գործառույթները, լիազորությունները և պարտականությունները.

10) հաստատում է պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման, վերահանձնման, պետական որակավորող հանձնաժողովի ձևավորման կարգը.

11) սահմանված կարգով հաստատում է հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների շնորհած պատվավոր կոչումները և տիտղոսները.

12) մշակում է կրթության բոլոր աստիճանների գծով պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը.

12.1) սահմանում է հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, լրացման, բաշխման, հաշվառման և պահպանման կարգերը.

12.2) սահմանում է նախադպրոցական, հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի տրամադրման ընթացակարգը, հավաստագրի դադարեցման դեպքերն ու ընթացակարգը.

13) սահմանում է օտարերկրյա պետությունների կրթական փաստաթղթերի համարժեքության որոշման և ճանաչման կարգը.

14) ապահովում է պետական ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի ձևավորումը, իրականացումը.

14.1) սահմանում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը.

14.2) մշակում, ներդնում և վարում է կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրները.

14.3) հաստատում է լիցենզիայի ներդիրի և լիցենզավորված անձանց գործունեությանն առնչվող հաշվետվության ձևերը.

14.4) ***(կետն ուժը կորցրել է 22.05.24 ՀՕ-251-Ն)***

15.1) համաձայնություն է տալիս պետական համապատասխան լիազորված մարմնի կողմից ուսումնական հաստատությունների վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ.

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորություններ:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը սույն հոդվածի 3-րդ, 6-րդ, 6.1-ին, 7-րդ, 10-րդ և 14-րդ կետերով սահմանված իրավասությունները ռազմական կրթության ոլորտում իրականացնում է պետական համապատասխան լիազորված մարմնի հետ համատեղ:

(37-րդ հոդվածը խմբ. 15.05.01 ՀՕ-187, խմբ., լրաց. 26.07.01 ՀՕ-209, լրաց. 01.12.03 ՀՕ-58-Ն, 04.02.10 ՀՕ-20-Ն, փոփ. 11.05.11 ՀՕ-151-Ն, լրաց. 30.09.13 ՀՕ-99-Ն, 16.03.16 ՀՕ-34-Ն, փոփ., լրաց. 20.01.21 ՀՕ-31-Ն, լրաց. 04.05.22 ՀՕ-127-Ն, 17.01.23 ՀՕ-7-Ն, 10.02.23 ՀՕ-26-Ն, 26.10.22 ՀՕ-391-Ն, խմբ., փոփ. 22.05.24 ՀՕ-251-Ն)

(20.01.21 ՀՕ-31-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(04.05.22 ՀՕ-127-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

(17.01.23 ՀՕ-7-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթ)

(10.02.23 ՀՕ-26-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

(30.07.21 ՀՕ-319-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(22.05.24 ՀՕ-251-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Գ Լ ՈՒ Խ 6.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 49. Սովորողների իրավունքները և սոցիալական պաշտպանվածությունը

1. Ուսումնական հաստատությունը նպաստում է սովորողների կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

2. Արգելվում է սովորողներին ներգրավել աշխատանքի՝ առանց վերջիններիս և (կամ) նրանց ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնության, բացառությամբ կրթական ծրագրի շրջանակում նախատեսված կամ աշխատանքի վրա հիմնված ուսումնառության տեսակներով կրթության կազմակերպման դեպքերի: Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման մեթոդների կիրառումն արգելվում է:

2.1. Նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվում և իրականացվում են միայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված ծրագրերը, ուսումնական նյութերն ու դասընթացները, այդ թվում՝ փորձարարական:

3. Բացառիկ ընդունակություններ դրսևորած երեխաների համար կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով կարող են ստեղծվել հանրակրթական համապատասխան հաստատություններ:

4. Պետությունն ապահովում է առանց ծնողական խնամքի մնացած և ծնողական խնամքից զուրկ երեխաների ուսուցումը պետական հանրակրթական հաստատություններում:

5. ***(մասն ուժը կորցրել է 26.10.22 ՀՕ-391-Ն)***

6. Պետական մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները կրթաթոշակ են ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով: Ուսանողական կրթաթոշակի տրամադրման առանձնահատկությունները սահմանվում են մասնագիտական կամ բարձրագույն կրթության մակարդակները կարգավորող օրենքով:

7. Ռազմաուսումնական հաստատությունների սովորողները դրամական բավարարմամբ, հանդերձանքով, սննդով և կացարանով ապահովվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Մասնագիտական և բարձրագույն կրթության ուսումնական հաստատությունների ուսանողներն իրավունք ունեն տվյալ կամ այլ հաստատությունում վճարովի հիմունքներով ստանալու մեկից ավելի մասնագիտություն՝ համաձայն տվյալ կրթության մակարդակը կարգավորող օրենքի:

9. Սովորողները պետական ամփոփիչ ստուգումը հաջողությամբ անցնելու դեպքում, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իրավունք ունեն տեղափոխվել համապատասխան մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական այլ հաստատություն:

10. Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներն իրավունք ունեն ստանալու պետական նմուշի դիպլոմ՝ մինչև 2016-2017 ուսումնական տարվա ավարտը հանձնելով ամփոփիչ ատեստավորման քննություններ՝ պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերում ըստ մասնագիտությունների՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մասնագիտական-առարկայական ծրագրերի համաձայն: Պետական քննությունների կազմակերպական կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը մինչև 2011 թվականի փետրվարի 1-ը:

(49-րդ հոդվածը լրաց. 19.11.02 ՀՕ-467-Ն, 08.07.05 ՀՕ-165-Ն, փոփ., լրաց. 28.10.10 ՀՕ-153-Ն, փոփ. 19.05.14 ՀՕ-22-Ն, 26.10.22 ՀՕ-391-Ն, լրաց., խմբ. 22.05.24 ՀՕ-251-Ն)

(30.07.21 ՀՕ-319-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(22.05.24 ՀՕ-251-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)